

## 4.3.2. Ներքին զբոսաշրջություն

Ըստ ստացված հաշվետվությունների տվյալների՝ 2012թ. հունվար-մարտին հանրապետության տարածքում տեղաբաշխված զբոսաշրջիկների կոլեկտիվը և անհատական տեղավորման միջոցներում (կացարաններում) տեղավորվել են 45223 զբոսաշրջիկներ (ՀՀ ռեզիդենտներ)<sup>1</sup>, ինչը 2011թ. նույն ժամանակաշրջանի նկատմամբ աճել է 20.3%-ով:

## Ներքին զբոսաշրջությունն ըստ նպատակի

մարդ

|   | 2011թ.<br>հունվար-մարտ | 2012թ.<br>հունվար-մարտ | Տեսակարար<br>կշիռը<br>(2012թ.<br>հունվար-<br>մարտ,%) | Աճի<br>տեմպը,<br>% |
|---|------------------------|------------------------|--|--------------------|
| <b>Ընդամենը զբոսաշրջիկներ<sup>2</sup></b> | <b>37596</b>           | <b>45223</b>           | <b>100.0</b>   | <b>120.3</b>       |
| որոնցից ըստ նպատակի՝                      |                        |                        |  |                    |
| գործնական                                 | 13489                  | 16748                  | 37.0   | 124.2              |
| հանգստի և ժամանցի                         | 19986                  | 23154                  | 51.2   | 115.9              |
| բուժման                                   | 1088                   | 1820                   | 4.0  | 167.2              |
| այլ                                       | 3033                   | 3501                   | 7.7  | 115.4              |

<sup>1</sup> Ըստ ՄԱԿ-ի զբոսաշրջիկության համաշխարհային կազմակերպության (ՁՀԿ) մեթոդաբանության (International Recommendations for Tourism Statistics 2008, Compilation Guide, UN WTO, Madrid, November 2010) ներքին զբոսաշրջիկ է համարվում ցանկացած անձը, որը ճանապարհորդում է իր հիմնական բնակության վայրի երկրի սահմաններում (սովորական բնակության միջավայրից դուրս), այսինքն որևէ երկրի բնակիչների ճանապարհորդությունը իրենց իսկ երկրում կամ հիմնական բնակության երկրում, անկախ ճանապարհորդության նպատակից (բացի ուսման նպատակով) ոչ պակաս քան 24 ժամ և ոչ ավել քան անընդմեջ 1 տարի ժամանակով և ճանապարհորդության գլխավոր նպատակը չի հանդիսանում գործունեությամբ զբաղվելը, որի համար վճարվում է այցելած վայրում:

<sup>2</sup> Տվյալներն արտացոլում են միայն հյուրանոցներում, հյուրանոցային հանգրվաններում, առողջարաններում, հանգստյան տներում հաշվառված զբոսաշրջիկներին: